



10 ՓԲՅ.



10 ՓԲՅ.

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՂԲԱՅԻՆ ԵՐ ԱՐԵՒՏԻԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Դ. ՏԱՐԻ 1289 ՇԱՊԱՆ 27 ՉՈՐԵՔՇԱՐԹԻ 18 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1872 ԹԱՌՄՈՒ 10 Ե. Տ. ՀՈԿՏԵՄԲԵՐ 30 Թ. 828

Գեր. Խորէն սրբազան այս անդամ ուշագրութեամբ կարդացուելու արժանի յօդուած մը գրկած է մեզ հրատարակութեան մեր ազգային վարժարանաց մէջ հայ դաժնոյի վարդապետաց որ և է պաշտօն վարելուն դէմ, որն որ վաղը պիտի հրատարակենք ազգային ամեն կարգի պաշտօնատարաց ուշագրութեամբ յանձնելով:

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՀԱՍՏԱՐԱԿԱՆ ԿԱՐԾԻՔ

Հասարակաց կարծեաց դազափարը որ դարձա սկիզբը Արեւմտեքէն փայլելով ակնթարթի մէջ բոլոր Եւրոպիոյ վրայ ցուցաւ, կարծես այս վայրկեանիս խորին թմրութեան մէջ ընկզմած թմր. դարու բռնութիւնները սոսկամբ և ահաբեկ ի հետո ստ կը գեղէ:

Ինչ եղաւ Եւրոպիոյ մէջէն հասարակաց կարծիքը, կը հարցնէ ինքնիրեն Յրանս լրագիրը, և ո՞ր են թէ՛ խորհրդարանաց և թէ՛ դահլիճներու մէջ դորա բերաններն ու արձագանգը:

Անցեալ դարուն վերջերը և ներկային սկիզբը տեղի ունեցած այնչափ նշանաւոր և մեծամեծ շարժումներէն յետոյ, Եւրոպիոյ մէջ դորա որ հասարակաց կարծիք մը գոյացած էր, որ միշտ կը յարդուէր և արթուն հսկող մ'էր իրաւանց և քաղաքակրթութեան սկիզբանց:

Այս հասարակաց կարծիքը ո՛չ միայն լրագրաց կամ հանդէսներու յօդուածներու միջոցաւ կը ներկայանայր:

ոչ միայն տոնք էին իր թարգմանները, այլ և խորհրդարանաց մէջ ինչ իբր անկենսականներն ունէր, և որ մինչև պաշտօնական և դիւանագիտական ընթացից վրոյ ինչ ինչ ազդեցութիւնը կը ներդրէր:

Նա էր որ զԵւրոպա գրգռելով, ինչպատ Բաւնաստանի երեք մեծ տէրութիւնք միջամեծու կը մղէր, նա էր որ Պէլճիքոյի ազատութիւնը կը դըրձատէր, և դահլիճներու ձեռքը նորն անկախութիւնը նուիրագործել կուտար, նա էր որ Աւստրիոյ ամեն անգամ դէպ յիտալիա շարժում մ'ընելու ատեն, վիէնայի արքունեաց իտալական թերթիկոյն վրայ ունեցած աշխարհակալութեան դիւանացը դէմ կը բողոքէր: Նա էր որ Բրաքովիան իրենց երկրին սահմանացը հետ միացնելու ատենին, Լորտ Բայմէրսթընի բերնովը որոտայր պահանջուհներ ընել կը թելադրէր: Նա էր որ Նաբոլիի թագաւորին դիտողութիւններ ուղղելու կը հարկադրէր Գաղղիական և Անգղիական դեմպանագիտութիւնը, նա էր վերջապէս որ առ իմ չը փախցնելով անիրաւութեան և բռնութեան դէմ ձայնը բարձրացընելու, քաղաքակրթութեան և մարդկութեան համար երջանիկ թուական մ'ածելու անկալութիւնը կը տածեր ի մեզ:

Ինչ եղաւ այս հասարակաց կարծիքը, ո՞ր մնացին խորհրդարանաց և դահլիճներու մէջ դորա թարգմանները: Մեք միայն չեմք, Գաղղիոյ հետ ամբողջ Եւրոպա ալ կողբայ հասարակաց կարծեաց չըղոյութեանը վրայ:

Երբ դարը բռնութեան և տիրացեալութեան դար է՝ հասարակաց կարծիքը գործ չունի այլ խորշերի թուականներէն: Գլխաւորապէս ինչ է:

ԳՆԵՄԱՆԻՈՅ ԿԱՌՈՒՄԻ ԿՂԵՐԸ

Գերմանիոյ մէջ կղերականաց նկատմամբ նոր օրինաց հաստատութեան ի վեր, նոր կայսրութեան մէջ գտնուող կոթողիկ կղերին դիմագրութիւնք երթալով դորանալու, և կառավարութեան դէմ մեծամեծ դժուարութիւններ յարուցանելու վրայ է:

Այս օրինաց դէմ բողոքելու, և հարկ եղած միջոցներն ձեռք առնելու համար: Հռովմայ եկեղեցւոյն յարեալ կաթողիկ եպիսկոպոսներն արդէն Յուլտայի մէջ յայտնի համարձակ ի ժողով գում բուելով խորհրդակցութեան կը բաղէին: Յուլտայի եպիսկոպոսաց այս ժողովը վերջապէս խոչընդոտողի մը պատրաստեց զոր Բրուսիոյ կառավարութեան ուղղեր է:

Սոյն յիշատակագիրը, որ ութն գլխոց բաժնուած է, նախ կաթողիկ եկեղեցւոյն անկախ և ինքնուրոյն կացութեանը Պետութեան Պահանադրութեամբը երաշխաւորեալ լինելը կը յայտնէ: Յետոյ կրօն թէ կայսրութեան նոր հաստատութեան եկեղեցւոյն այս վաղեմի իրաւունքներն ու է կերպով փոփոխել չը հետևիր, և թէ եկեղեցին իրաց այս նոր վիճակին դէմ փոխանակ վնասակար լինելու, ընդհակառակն ինքն է որ զրկանք և բռնութիւն կը կրէ: Յիշատակագիրը կրօն թէ եկե.

ղեցոյն իրաւունքները բռնաբարութեամբ են, դիտարարար Պետութեան կողմէն հին-կաթոլիկաց (Պապին անսխալակաւ նութիւնը չընդունող) ազանդին գտած ձեռնառութեան շնորհիւ: Ճիշդութիւն միաբանութեան վրայ ծանրացել ուղուած ամբաստանութեանց և ճիշդութեան նկատմամբ արուած օրէնքին դէմ խօսելէն վերջ, վարժարանաց տեսչութեանը վրայօք հաստատուած օրէնքը կը քննադատէ, և իրենց դպրոցներուն ետ դարձաւ իր և անկախօրէն ընթացքը կը պահանջէ, կրօնքին իբր յարակից և անբաժանելի մէկ պայմանը, կաթոլիկ միաբանութիւնները պաշտպանելով, քարոզներու զեղծմանցը վրայօք դրուած օրէնքին դէմ խօսելու կը յարձակի, և իրաց այս վիճակէն թէ երկրին ապահովութեանը, և թէ հասարակային և բարոյական բարեկարգութեանը դէմ յառաջ գալիք ծանր և անհաճոյ հետեանքները ցոյց տալով կը վերջացնէ: Սոյն յիշատակագիրը Գերմանացի լրագրաց շատին թէ նպատակ ուրիշ թէ անպատասխան վիճարանութեանցը նիւթ եղած է:

ՊԵՐՂԻՆԻ ԹՇՈՒՄՈՒՈՒԹԻՒՆԸ

Պերլինի մէջ ժողովրդեան թշուառութիւնը այն աստիճանի հասած է որ մօտերս մեծ խռովութիւն մ'ենել կը վախցուի:

Բազմաթիւ գործաւորներ որք մէկ կողմէն գործերին գաղթելով մայրաքաղաքն եկեր խռններն, միւս կողմէն գրամական տագնապը, որն որ պատրաստ ստակը անտուկին զնելով պահող խել մը պանքաներուն հաստատութեան յառաջ գալու վրայ է, ճրմբան մօտենալը, և բնակչորաններու բացարձակ չըզոյթութիւնը կառավարութեան մեծ մտահոգութիւն և երկիւղ կը պատճառեն:

Աւելցուելի կազէթը հետեւեալը կը գրէ այս մասին.

Պերլին ութն օրէ հետէ վերի վայր կը յուզի: Պաշտօնական տեղեկագիրներն կը հաստատեն թէ 300 հազար հոգի, Պերլինի կարուածատեարց առակի կարգ անցած յըջաքաղութեան երեսէն, նստած տուներնին թողլով ելնելու հարկադրուած են: Շատերը փոչոցներու մէջ կը թափառին իրենց ապաստանարան մը ճարելու: Չըկայ թերեւս տուն մը ուր այս անօրինակ խռնակութիւն անդի չունենայ, խնդիր եղաւ

որ անապատան մնացող ժողովրդեան համար երկու գորանոց արուի բնակելու բայց վերջը տեսան որ այսպիսի միջոց մը մեծ անտեղութիւններ յառաջ կը բերէր:

Իրաց այս վիճակին մէջ բազմաթիւ կարավաններ քաղքին մէջը փոզոցէ փոզոց կը շրջին, և կարասեօք հանդերձ հրապարակներուն վրայ օթեանելով կը նստին:

Որչափ ճշմարիտ է թէ Պետութեան մը հարստութիւնը, ինչքան մեծ ըլլայ, բաւական չէ՝ դարձեալ իր ժողովուրդը երջանիկ ընելու. և թէ՛ կառավարութեան մ'անբաւ հարստութիւնը իւր ժողովուրդին բարեկեցութեանը չը կրնար նպաստել: Ահաւասիկ Գաղղիայէն կորզած երկիրիները զանձուն մէջ բնատարիող Բրուսիոյ նման հարուստ և ահարկու պետութիւն մը, որոյ մայրաքաղաքին խկ բնակչաց մեծ մասը յետին չքաւորութեան ու թշուառութեան մէջ կը տանապի:

Աստուած զօշաքաղ Պետութեան մը հպատակ չ'ընէ զմարդ:

ԱՊԱԿԵԴՐՈՆԱՑՈՒՄՆ

Գաղղիոյ գաղթականութեանց պաշտօնեայն օրինաց ճրագիր մը պատրաստեր է յառաջիկայ դումարելի Ազգալին ժողովոյն ներկայացնելու, որով կ'առաջարկէ թէ աշխարհիս այլ և այլ մասերուն մէջ գտնուած Գաղղիացի գաղթականներն, հանրապետական դրութեամբ իւրաքանչիւրն իւր քաղաքային ներքին գործերը կարգադրելու ու ինքնին վարելու արտօնութիւն մը ունենա, մասնաւոր ինքրոց նկատմամբ ուղղակի կեդրոնական իշխանութեան ղեկելոյ առանց պէտք մ'ունենալու: Այս ճրագրին Ազգային ժողովէն ընդունուելուն այժմէն հաւանականութիւնները երեւնալով, վարչական ապակեզրոնացումը ոչ միայն դաւառաց այլ և գաղթականութեանց մէջ ալ պիտի տարածուի:

ՊԱՅԹՈՒՑԻԿ ՆԵՐԿԷՍ

Գաղղիոյ ծովեզրերայ սահմանները պաշտպանելու համար ձեռք առնուելիք միջոցներուն վրայօք խորհրդակցելու պաշտօնով, ծովային գործոց պաշտօնէին կողմանէ կազմուած յանձնաժողովը, բազմաթիւ նիստեր ընելէն յետոյ՝ ներկէս (ձկան անունէն առնելով,

Թօրրիլ) կոչուած ծովային ահաներուն վրայօք առաջին մէկ տեղեկագիրը ներկայացոյց:

Պաշտպանողական տեսութեամբ այս աւերիչ ահաներուն մատուցանելիք ծառայութիւնները մի առ մի թուելէն յետոյ, յանձնաժողովը կը խնդրէ որ Բօլֆօրի մօտ Պոյարտփիլի բացը այս մասին նոր փորձեր կատարուին:

Ծովային պաշտօնեայն ընդունելով այս խնդիրքն, հրաման տուեր է որ ըլլան այդ փորձերը, և Բաթինա անուն քօրվէթ շողենաւը, որ քսան տարիէ ի վեր ծովային ծառայութեան մէջ կը գտնուէր, այս անգամ պայթուցիկ ներկէսներուն փորձոյն զահուելով, յիշեալ յանձնաժողովոյն ձեռքը յանձնուեր է:

ՀՆՌԱԳՐՍԼՈՒՐԻ

ԳԵՐՄԱՆԻԱ

Պերլին 28 հոկտեմբեր
Աշուտականաց խորհրդարանը կառավարական շրջանակաց վրայ բացուած վիճարանութիւնը շարունակելով՝ յանձնաժողովոյ ըրած բոլորառաջարկութիւններն ընդունեց, կառավարութեան կողմանէ ցոյց տրուած սաստիկ ընդդիմութեանց հակառակ:

Պատ 28 հոկտեմբեր

Քաղաքիս մէջ մէկ բանի քօլէրայի մահացու դէպքեր պատահեցան: Սըքունիքն, որ 43 օրէն աւելի է հոս կը գտնուէր, կօքտօք առանձնացաւ:

ՍՊԱՆԻԱ

Մարտիս 28 հոկտ.

Երեսփոխանական ժողովոյ դիւաններն զՍականթա նպաշտօնեայն դատաստանի ենթարկել առաջարկեցին:

ԻՏԱԼԻԱ

Նարոլի 28 հոկտ.

Թագաւորը քաղաքս եկաւ քանի մ'օր կենալու: Երէկ նաւահանդէս մը տեղի ունեցաւ, որ շատ սքանչելի տեսարան մը կը ներկայացնէր:

ՅՈՒՆԱՍՏԱՆ

Աթէնք 27 հոկտ.

Այսօր հանդիսաւոր պատարագ մատուցուեցաւ: Պուրիսրաց խնդրոյն նըկատմամբ յունական սիւնհոդոսին տուած վճիռը Աթէնքի Ս. Սիւնոդին կողմանէ ընդունուելուն առթիւ: Հաւատացելոց մեծ բազմութիւն մը ներկայ կը գտնուէր:

Լօրիօմի հանքաց խնդրոյն նկատմամբ պաշտօնէից նախագահին հետ կարծեաց անհամաձայնութեան պատճառաւ արտաքին դործոց և կրօնից պաշտօնեայնեան հրաժարական տուին :

Քօրիտ 28 հոկտ.

Ռուսիոյ ներքու մեծ դուքսը այս տուազտ հոգ հասաւ : Սոյն այցելութեան առթիւ ամայն վերջէն յառաջ արքունիքն Աթէնք չը պիտի վերադառնայ :

ՆԵՐՔԻՆ

Գարատաղի մայրաքաղաքէն (Չէթիսէ) հետեւալը կը գրեն թրեխտի Օստրլաթօրէ լրագրին : « Գանի մը օրէ ի վեր Շքօարայի լեռնականաց զխաւորներէն մէկ քանիին մեր կողմերը տեսնուելուն վրայօք կը խօսուի : Կըսեն նաև թէ Շքօարայի բաշան Հօթթի ցեղերուն քրիստոնեայ զխաւորներն բռնեք բանտարկեր է մարդասպանութեան յանցանք փախըստական մը Շքօարայի իշխանութեան ձեռքը յանձնել չուզելուն պատճառաւ : և թէ այս տեսակ խտուութեանց վրայ ժողովրդեան դժգոհութիւնը երթալով աւելցեր է :

Են համոզուած եմ որ տեղի ունենալիք դէպքերուն մեք մեր կողմէն պարզապէս հանդիսատես միայն պիտի լինիմք : բայց սա ևս անուրանալի է թէ Գարատաղի ժողովուրդն ալ համակրութիւն մ'ունի Ալպանիոյ քրիստոնեայ և քաջարի ժողովրդեան վրայ , որն որ չորս դար յառաջ մէկ ազգ կը կազմէին մեզի հետ : Շքօարայի լեռնաբնակ ազգերը Սլու նախահարց սերունդ մ'են : և այն ատենները իրենց զխաւորը Չերնօվիչ իշխաններէն մէկն էր , որն որ Զապիւքի միջաբերքը կը նստէր :

Կըսեն թէ Գարատաղի իշխանը միտք ունի վիճենա և Ս. Բէթէրսպուրկ ուղևորութիւն մ'ընելու : Ռմանք այս ճանրորութեան պատճառը քաղաքական նպատակի մը կուզեն վերընծայել : բայց շատ հաւանական է թէ իշխանը Չէթիսէէն էլ թէ մեկնելու ըլլայ (որն որ յառաջիկայ տարեգրիսէն առաջ չը կրնար տեղի ունենալ) ուղղակի վիճենա կ'երթայ : Եւրոպիոյ միւս իշխանաց պէս , Համաշխարհական Արմեառահանդիսին ներկայ գտնուելու :

Չեմ ուզեր թէսլէտ այս լրոյն ըստուգութիւնը երաշխաւորել , սակայն Գարատաղցոց մէջ այս ուղևորութեան վրայօք շատ կը խօսուի , ու այլ և այլ պատճառներու կուտան զայն :

Գարատաղցոց ալ Ալպանիոյ սահմանազուխները հանած անկարգութեանցն առթիւ Բէթթօյի Լոյա լրագրը հետեւեալը կը գրէ :

Սրգարև Գարատաղ այս միջոցին առաւել Աւստրիա-Հունգարիայէն կախումն ունի , զոր ոչ ոք կը կարծէ , և ինքն ալ լաւ կընէ եթէ չը մտնայ զայս : Սրգ եթէ Տաճկաստանի և Գարատաղի մէջ տեղը իրօք մեծ վէճ մ'ալ՝ ճագի զայդ չափազանցօրէն մեծցնելու տեղին չը կայ : Բնաւ մէկ Տէրութիւն մը չը պիտի արդեալ զՏաճկաստան հարկաւոր դատած փոխարինութիւնը պահանջէն , և ոչ ոք պիտի հակառակի ապրտամբ երկիրներուն մէջ բարեկարգութիւնը հաստատելուն դէմ :

Բէթիւպիւք Ֆրանսէի լրագիրը ապէս սա հետեւութիւնը կը հանէ , ըսելով . « Ասի կը նշանակէ թէ Աւստրիա ինչպէս Աւստրիայի կոմսն յայտարարեց Տաճկաստանի դոյութիւնը իւր շահուցը անհրաժեշտ կը դատէ , չը պիտի թողու որ Օսմանեան կայսրութեան ամբողջութիւնը փոքր ինչ փնաս մ'անդամ կրէ : Բայց , կ'ըսէ , կը մնայ զիմանալ թէ Ռուսիա պիտի թողու արդեօք որ ապրտամբ երկիրներուն մէջ բարեկարգութիւնը վերահաստատելու համար Աւստրիա ազատօրէն դործակցի Բ. Դրան հետ » :

Երկուշաբթի կէս օրին ինչպէս որ նոյն օրն առտուան թերթօքից ձանուցինք , Արքունի նաւարանէն չուրըն իջուցին զրահաւոր Քօրվէթը :

Հանդիսին ներկայ էին բաց ի վեհ Սուլթանէն կայսրորդի Էուսուֆ Խզէտտին իշխանն , Մեծ-Եպարգոսն և պաշտօնեայք : Անթիւ բազմութիւն մը նաւահանգստին դիմացի ծովն ու ծովեղերքը ծածկած էին :

Թնդանթարանի վերատեսուչեալեր բաշա՝ ճէրիտէի Հավատիս Տաճկերէն լրագրոյն դէմ դատ պիտի բանայ կ'ըսուի :

Իպրէթ լրագիրը կը ծանուցանէ թէ Ռուսները վիճակին մէջ ազգահամար մ'ընելու բնակչոց թիւը դաւեր են 309,897 հոգի , որոց 190,718ը մահմե-

տական 115,292 Պուլկար , 991 Հայ , 1,102 Հրէայ , և 1794 Գնու : Նշանակութեան արժանի է Յոյն ժողովուրդ բնաւ չը գտնուիլը :

Երեքշաբթի լուսնալու գիշերը ժամը 6ին միջոցները Պէշիկթաշի մէջ մեքենայով կար կարող Քօթի անուն դերձակ մը , որն որ նաւամատոյցի վերայ խանութներէն մին կը նստէր , սուկալի կերպով գինովցած մինակ շապկով մը խանութէն դուրս կը ցածկէ , և փողոցն ի վեր վաղել կ'սկսի : Երեք պարտիզպան զայս տեսնելով կը կեցընեն զինքը , և յանդիմանելով կ'սկսէ պէն դանի որ իր բնակարանը դառնայ : Այս յանդիմանութիւնը ծանր դաւով Քօթիին , իսնութը կը մտնէ , և ֆէսի փայտէ կաղապար մը յափշտակելուն պէս պարտիզպանին մէկուն զլսուեն կ'իջեցնէ ու կը պատռէ : 6781

Կիրակի լուսնալու գիշերը Բերայ թէքքէի կողմը Պուլայ Գերմանացի գաղթականութեան մօտերս նորոգել ալուած Տիտանեա անուն ժողովատեղւոյ շէնքին մէջ հրդեհ պատահելով : ամբողջ շէնքը կահկարասեօքն հանդերձ երկու ժամու մէջ այրեցաւ , անմիջապէս հասած օգնութեանց չնորհիւ հրդեհը մտակայ փայտաշէն ատեններուն չը ճարակելով :

Կըսուի թէ կազը ընդունարանէն փոխելով շէնքին մէջը լեցուեր , և լուսոյ առաջին կայծը տեսնելուն պէս յանկօրծ շէնքին մէջ ամեն կողմը մէկէն բռնկիլ սկսեր է :

Հրդեհի միջոցին ըստ սովորութեան , քաղահասաններն ալ բաւական գործ տեսեր են խանած բազմութեան մէջ , որուն ժամացոյցը , սրուն ալ քըսակը վերցնելով , որոյմէ մէկ քանին ալ դողցած ատենին բռնուեցան :

Հրդեհին մարեղէն ետքն ալ , երեք հայազգի որք բարեկամաց օգնութեան համար եկած ըլլալով , կէս գիշերուն նորէն բանկալթի կը վերադառնային , բաւական մօտեցած էին երբ 7-8 հոգի յանկարծ ասանց վրայ յարձակելով վրայի հազած զդեստինն ու ժամացոյցնին կը կողոպտեն ու փախչել կ'սկսին : որոցմէ մին , գիշերուան մթութեան հակառակ , տախկանաց կողմէն կը բռնուի , իսկ միւսները խոյս տալով աներկեղ իջնան :

ՄԵՆՃԱՍԹԼԸ ՊԻՐ ԻԼԱՆ

Սահմանադրութեան Պահակախումբը համարձակութեամբ կ'որոշուի իր անդամները...

1872 Հոկտ 20

Բանադատն ընդհանուր քննարկութեամբ պարտադրեալ է...

Պառտեպարտէսային խառնուրդի վերաբերյալ...

Մեղքիւր Բաքուի իսթիսթիտուտի պատմութիւնը...

ԺԱԳ ԱԼԻԲԵԱՆ

ԱՄԵՐԻԿԱ ԷՃՁԱՍԱՆԻՒՎԷ ՏԵՐՕ ԶԻԹՕՍՈՒ ՍԹԱՆՊՕԼ ԵՒՆԻ ՃԱՄԻ ՏԷՐՈՒՆԻՆՏԷ

Կերէք մեղքիւր մազազատումը այլընտրանք չունի...

Ձեռք չորս պարտք է միւսի իր լիարժեք շուքի շարապար...

Գեղարք է օքսիդիլ իչին եհնի իհտաս օլունու շ շան շուրս պարտան մաստա...

Սաչ վէ սաղալ պոյաքը Ամերիգանըն վէ Պրանսանըն պիրինծի ճինալըրին...

Մեղքիւր քեաֆիլի Ֆիրու իսթ օ

Լուան է ճգալար վէ ալթըլար կերէք Լծորանըն էն մէջալ ֆապրիգալա...

ՊԱՅՄԱՆՔ ԲԱՍԱՆՈՐԻԱՐՈՒԹԵՂՈՒՆ ՕՐԱԳՐՈՅ

Օրագիր ձեռք է կը ծախուի ամեն օր գին 10 բարսյ...

Երաքանչիւր բաժանորդ իւր խղճով տանքին և կարողութեանը հետեւ լինելով պէտք է ընտրէ այս երեք կարգէն մին...

ՏԻՐՊԻՆԻ ԱՇԳ

ՄԱ ՀՊՈՒՊԵԻ ՄԻԼԵԼ ՄՈՒՉԱՐՐԻՐԻ ՎԻՉԷՆ ԹԻԼ ԲԵՇԱՆ ԺԱ ԳԸԹԱ

Յ. Գ. Թողան տպարանէն իւրաքանչիւր ամս հետադր գրույարժ տեսճակը կը ծախուի ամեն հայ գրովա...

ՏԵՐ ԵՒ ՊԱՏԱՍԻԱՆԱՏՈՒ ՕԳՍԷՆ ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Ի ՏՊԱՐԱՆԻ Օ՛ ԽՕՃԱՍԱՐԵԱՆ ԵՌՆՈՒՅԵԱՆ-ԻԱՆ ԹԻԻ 4-5